

պատճառներ եւս, որոնց ինչ բլլալը շենք գիտեր: Որովհետեւ պատահած է որ զոյգեր, որոնք ամուլ մնացած էին տարիներ, ամուսնալուծումէ վերջ կրկին ամուսնութեան ատեն դաւակի տէր եղած են: Հոգեկան խտնուածքի տարբերութիւն, ներքնածոր գեղձերու անբնական դործունէութիւն, հոգեկան վիճակներ են. կրնան ազդել սերնդադործման բարդ երեւոյթին վրայ:

Հապա դարձանք. ո՛հ, շատ դիւրին է: Դարձանէ՛ վերոյիշեալ պատճառները, եթէ կրնաս, ու սկսիր համբել ծնունդները, մէկեակները, երկուորեակները, երեակները, քարեակները են. են.:

Հեշտ է աշտղս խօսիլ, և շարլաթաններուն յատուկ ոճ մը: Անոնք պիտի ըսեն, «ո՛հ տիկին, մի մտահոգութիւն, պղտիկ ֆիւրքած մը և դուք մի քանի ամիսնի սիրունիկ և թումպուլիկ տատրակ մը կ'ունենաք»:

Ա՛խ ինչ ըսեմ, քիւրթաթի սիրահարներուն... ինչ կ'արժէ քիւրթաթի եթէ արզանդին եղջիւրները դոցուած են: Ի՞նչ կ'արժէ թանփօնքմանը, երբ կնոջ ամուսնին ամորձիքները սերմնակենդանի չեն արտադրեր:

Ով կին, ամուլ ե՞ս ու կ'ուղե՞ս դաւակ ունենալ, պարոն ամուսինդ հեազ առ և բժիշկիդ քովը դնա:

Ամուսնուդ սերմը թող քննուի նախ, և յետոյ արզանդիդ եղջիւրներուն դոց կամ բաց բլլալու հարցը թող լուծուի մասնաւոր փորձով մը, յետոյ... դիւրին է մնացածը:

Կը տեսնե՞ք, կիներն ալ բացի դոցի հարց ունին: Ականջ ունեցողը թող լսէ, թէ ներխուժող սերմնակենդանիին և սիզածեմօրէն վալըջք կատարող հաւկիթին միացումին արդէյք եզոյ բոլոր խոշրնդոսները պէտք է որ վերնան:

Ահա ամուլութեան դարձանումը: Յանեցէք որ հնձէք:

ԲԺ. Ա. ԱԲԷԼԵԱՆ

Պոստըն

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, կը կարգաս և կ'օգտուիս, ՁԵՍ ՈՒՁԵՐ ճիԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն և օգտուին «Բուժանք»էն և զարգացնեն զայն:

ԻՄԿ ԴՈՒՆ ՈՐ ՈՒՐԻՇԻՆ «ԲՈՒԺԱՆՔ»Ը ԿԸ ԿԱՐԴԱՅ, գիտցիր որ չի բաւեր կարդալ, այլ պէտք է ունենալ և պահել «Բուժանք»ը, որուն մէկ խորհուրդը կրնայ քանի մը անգամ փոխարինել տուած բաժնեգրինդ:

ՈՒՐԵՄՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԷ,